


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՂԱԾԷՆ ԿԱՌՈՅՑՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՒ ԱՐԺԵԻՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հնագիտական պեղումների վերլուծութիւնները բացայայտել են, որ Արեւելքի եւ Արեւմուտքի խաչմերուկում գտնուող եւ դրանց մշակութային միահիւստեածքը կրող Հայաստանն իր պատմամշակութային ժառանգութեան շերտերում պահպանել եւ մինչ օրս է հասցրել հում աղիւսից իրականացուած կառոյցներ: Դրանց ուսումնասիրութիւնը այսօր շատ կարեւորում է, քանի որ դա եւս մէկ անգամ վկայում է պատմական բացարձակ տարբեր ժամանակաշրջաններում շատ հետաքրքիր ու բազմակողմանի նիւթի կիրառելիութեան, հետեւաբար շինարարական արուեստում դրա գոյութեան արդարացուած լինելու մասին:

Հայաստանն այն փոքրաթիւ երկրներից մէկն է, որտեղ հում աղիւսէ կառոյցները դեռեւս լիարժէքօրէն ճանաչուած եւ հաշուառուած չեն: Ի տարբերութիւն քարից կառուցուած շէնքերի, ժողովրդական տները եւ յատկապէս հողաշէն կառոյցների արհեստագիտական առաւելութիւնները դեռեւս արժեւորուած չեն: Ժողովրդական տների եւ հնագիտական ժառանգութեան վերաբերեալ կան որոշ հրատարակութիւններ: Սակայն ուսումնասիրութիւնները հիմնականում կրում են նկարագրական բնոյթ, որտեղ չի հիմնաւորուում հողաշէն կառոյցների առաւելութիւնները շինարարական տեսանկիւնից: Բացի այդ, ոչ մի կերպ անդրադարձ չի արւում հողաշէն կառոյցների պահպանման խնդիրներին: Պատմամշակութային ժառանգութեան այս խօսուն եւ արժէքաւոր շերտը այսօր կանգնած է վերջնական անհետացման եզրին:

Այս բնագաւառի ուսումնասիրութիւնը առաւել հետաքրքրական է մի շարք տեսանկիւններից: Ճարտարապետութեան եւ շինարարութեան Հայաստանի ազգային համալսարանի եւ Լիոնի ազգային բարձրագոյն ճարտարապետական դպրոցի գիտակրթական համագործակցութեան շրջանակներում ժողովրդական ճար-

տարապետութիւնը, եւ մասնաւորապէս հողաշէն կառույցները քիչ են լուսարանուած եւ ներառուած ուսումնական ծրագրերում:



Նկար 1. Արարատեան դաշտավայրի երեք ուրարտական ամրոցները


Ինչպէս արդէն վերը նշուեց, հում աղիւսից կառույցները կառուցուել են տարբեր պատմական ժամանակահատուածներում. սկսած Շէնգաւիթի եւ Մեծամորի պատմական բնակավայրերից (աւելի քան 6000 տարուայ պատմութիւն), յետագայում յաջորդող ուրարտական ժամանակաշրջանում (նկ. 1): Այս տարածաշրջանում հնագիտական պեղումների արդիւնքում բացայայտուած են ինչպէս փոքր բնակելի տներ, այնպէս էլ հում աղիւսէ կոթողային կառույցներ: Հայաստանում՝ համաձայն Փրանսիացի հնագէտ Ս. Դեշանի հետազոտութիւններին, բացայայտուել է ուրարտական շրջանի հողաշէն արժէքաւոր փառահեղ ժառանգութիւն՝ կրօնական կառույցներ, պալատական համալիրներ, բնակելի տներ, մասնաւորապէս իրերունիում, Թէյշերաինիում (Կարմիր Բլուր), Շէնգաւիթում, Ուրարտուի մայրաքաղաք Վան-Տուշպայում, Արմաւիրում (Արգիշտիիինիլի):

Աւելի ուշ կառուցուել եւ առ այսօր պահպանուել են ժողովրդական ճարտարապետութեան նմուշներ Գառնիում, Գորիսում, Երեւանում եւ նրա արուարձաններում, իջմիածնում եւ այլն:

Կառույցների տարատեսակները

Հայաստանում կան նաեւ ժողովրդական ճարտարապետության տեսակներ՝ ժայռափոր տներ (Գեղարդ, Գորիս), ինքնաշեն կառույցներ Երեւանում, մայրաքաղաքի արուարձաններում եւ էջմիածնում:

Սկսած 1960ական թվականներից հնագէտները ընդգծում են հողաշեն կառույցների պահպանութեան գիտարուեստի կատարելագործման անհրաժեշտությունը: Տուեալ միտումը համընկնում է ՀՀ տարածքների կայուն զարգացման ռազմավարութեան ծրագրերի հետ: Օրինակ, հողաշեն կառույցների պահպանումը կարող է հանդես գալ որպէս տեղական արհեստների զարգացման խթան եւ դառնալ մշակութային զբոսաշրջութեան հանգուցային մաս:



Նկար 2. Ծինարարական լուծումների բազմազան հնարաւորութիւնները

Իրականացուած ուսումնասիրութիւնների արդիւնքում բացայայտուել են հողաշեն կառույցներում շինարարական լուծումների բազմազան հնարաւորութիւններ: Դրանք են, օրինակ.

- կառուցուած *pisé* կամ *bauge* հարտարագործութեամբ, խառը բլոկներով՝ տեղանքին բնորոշ բուսածածկոյթից (դա բնորոշ է հիմնականում պարսպապատերի շինարարութեան համար),
- խառը հարտարագործութեամբ՝ քարի (տուֆ կամ բազալտ) եւ աղիւսի միաձուլուածով (բնորոշ է քարոյ շարուածով պատերի համար՝ միդիս շարուածով),
- հում կամ քրծուած աղիւսների խառնուրդի կիրառմամբ՝ օգտագործուած է փայտէ միջնապատերի համար,
- սուաղի տեսով՝ քարի, փայտի կամ հում աղիւսէ շարուածքի վրայ (նկ. 2):



Նկար 3. Սարերի լանջերին կառուցուած կիսագետնափոր կառոյցներ

Հում աղիւսից կառոյցներ պահպանուել են նաեւ ռուսական շրջանից: Երեւանում՝ Հանրապետութեան, Պուշկինի, Բուզանդի փողոցների վրայ, ինչպէս նաեւ Կոնդուս (Կոնդուս պահպանուել են նաեւ պարսկական շրջանից շինութիւններ), Սարի Թաղում: Հողաշէն կառոյցների շինարարութիւնը Արեւելեան Հայաստանի տարածքում նոր ուժ է ստացել մինչեւ Ի. դարի

երկրորդ կէսը: Վերջինս կապուած էր պատմաքաղաքական իրավիճակի հետ՝ երբ սկզբից 1915ի յայտնի իրադարձութիւններից յետոյ հազարաւոր ներգաղթեալներ, ելնելով սոցիալական վիճակից, եւ ինչու չէ, նաեւ երկիր բերելով Արեւմտեան Հայաստանին բնորոշ տնաշինութեան մշակոյթը՝ հողաշինութիւնը եւ հողաշէն տնաշինութիւնը: Այդպիսի օրինակներ կարելի էր հանդիպել երեւանի Նոր Արարկիր, Նոր Բութանիա, Նոր Զէյթուն, Նորազաւիթ շրջաններում (նկ. 3):

Սակայն ճարտարարուեստականացման արագ զարգացումը հետ մղեց մասնաւոր կառուցապատումը, եւ կառուցապատման պահանջարկը լրացւում էր շնորհիւ գանգուածային շինարարութեան ու արդիական գիտարուեստների: Արդիւնքում բացարձակ փոխուեցին քաղաքաշինական միջավայրի չափազրական ընկալումները, ծաւալատարածական հնարքները, ինչպէս նաեւ աստիճանարար մոռացուեցին եւ վերացան տեղական շինարարական արհեստի որոշակի հմտութիւններ: Բացի այդ, կիրառուող գիտարուեստները յաճախ մեծ հակասութեան մէջ էին Հայաստանի ընակլիմայական պայմանների հետ:


Այսօր հողաշէն կառոյցների ճարտարապետական ժառանգութեան ուսումնասիրութեան հարցը նորից արդիական է, եւ այն պէտք է իրականացուի երեք հիմնական տեսանկիւններից՝ միջավայրային, հասարակական եւ տնտեսական: Դրան գումարւում է նաեւ ներկայիս կենսական պայմաններին համապատասխանող կառուցապատման մշակութային բնութագիրը: Հաշուի առնելով երկրի տնտեսութեան ճգնաժամային իրավիճակը, անհրաժեշտութիւն է առաջանում գտնել նոր լուծումներ եւ առաջ են գալիս հետեւեալ հարցերը.

- Արդեօ՞ք հայկական աւանդական շինարարական մշակոյթը, մասնաւորապէս հողաշէն կառոյցները, որոնք մշտապէս առկայ են եղել ինչպէս ժողովրդական, այնպէս էլ մասնագիտական կոթողային նարտարապետութեան մէջ եւ ապախորհրդայնացման շրջանում անհետացման եզրին են, արժանի չեն ուշադրութեան եւ նորարարական մօտեցումների կիրառման:
- Կարի՞ք չկա՞յ արդեօք հաւաքագրել հողաշինութեան նմոյշները եւ վերլուծել որպէս հնարամիտ կառուցողական լուծումների օրինակ, ներկայացնել հողաշէն կառոյցների նարտարապետութեան որակական հնարաւորութիւնները, դրանց նոր, էկոլոգիապէս եւ տնտեսապէս աւելի նպատակայարմար քնակելի միջավայր ստեղծելու հնարաւորութիւնը: Արդեօք չի՞ կարող այդ կառոյցների

ուսումնասիրութիւնը հիմք հանդիսանալ նորարարական լուծումների համար:

Վերոյիշեալ հարցերի դուրս բերումը արդէն իսկ յուշում է նրա մասին, որ Հայաստանի հողաչէն կառոյցների ժառանգութիւնը պէտք է վերլուծուի՝ ելնելով միջավայրի հասարակական եւ տնտեսական չափանիշներից, որոնք կ'ընդգրկեն կայուն զարգացման կողմնորոշումներ եւ ռազմավարութիւն՝ շինարարութեան բնագաւառում:

Այս համակողմանի վերլուծութիւնը թոյլ կը տայ բացայայտել հասարակութեան նոր բնարութեան հնարաւորութիւնը բնակելի շինարարութեան բնագաւառում՝ առաւելագոյնս օգտագործելով տեղի բնակչութեան կարողութիւններն ու հմտութիւնները:



Նկար 4. Պահպանական եւ արժեւորման ծրագրերի զարգացման հնարաւորութիւնները

Սա թոյլ կը տայ նաեւ համընդհանուր աշխարհայնացման պայմաններում վերագտնել Հայաստանի շինարարական մշակութի ինքնութիւնը, իրականացնել իւրայատուկ «Քարտէզագրութիւն», որտեղ հողաչէն նմոյշները կը դասակարգուեն ըստ տեղային առանձնայատկութիւնների, քանակի եւ տեսակի: Առաջարկում է մշակել նաեւ Հայաստանի հողաչէն կառոյցների, նիւթերի եւ շինարարական գիտարուեստների տեղեկագրական պահոց, ուր կարող է ընդգրկել առաւել կարեւոր տիպերի լուսանկարներ եւ չափագրութիւններ: Քննարկուող հիմնահարցերի ուսումնասիրութիւնը անշուշտ բարդանում է, քանի որ թեմային վերաբերող

նիւթերը սակաւաթիւ են, տները՝ յաճախ կիսաւեր, անխնամ կամ քանդուած, ինչի հետեւանքով խրթին է դառնում նաեւ իրականացնել դրանց չափազրուծիւնը (նկ. 4):

Այս պարագաներում շատ կարեւորում է նաեւ Հայաստանի Ճարտարապետութեան եւ Շինարարութեան Ազգային Համալսարանի ու Լիոնի ազգային բարձրագոյն ճարտարապետական դպրոցի (ENSAL), Լիոնի «Ճարտարապետութիւն, Փաղաքաշինութիւն, Հետազոտութիւն» (LAURE) լաբորատորիայի, ինչպէս նաեւ Գրենորլի Ազգային բարձրագոյն ճարտարապետական դպրոցի (ENSAG) «Ճարտարապետութիւն, Միջավայր եւ Շինարարական Մշակոյթ» (AE&CC), «CRAterre եւ Շինարարական Մշակոյթ» լաբորատորիաների հետազոտական կառույցների համագործակցութիւնը, որ նպատակաուղղուած է շարադրուած հարցադրումների լուծմանը:

ՍԻԻԶԱՆ ՄՕՆՆՈՅ ՏԷՐ-ՄԵՍՐՈՊԵԱՆ

Résumé

CONSTRUCTIONS ET ARCHITECTURES
DE TERRE EN ARMÉNIE:

quelle(s) stratégie(s) possible(s) pour la reconnaissance et
patrimonialisation pour le développement des territoires

SUZANNE MONNOT TER-MESROPIAN

L'Arménie a un passé constructif en terre dont l'avenir est menacé dans la période actuelle de «dé-soviétisation». C'est aussi un des rares pays où les constructions en terre sont peu connues (contrairement au patrimoine en pierre).

Pourtant, les fouilles archéologiques confirment la présence d'un patrimoine monumental remarquable en adobes (Erébouni, Karmir Blour, Chengavit, etc). Parallèlement l'habitat vernaculaire est moins admis. Malgré la disparition de quartiers anciens à Erévan, il est encore possible de déceler des habitats révélant des principes de construction en terre qui méritent des études.

Avec le constat que ces cultures constructives disparaissent en Arménie, contrairement à d'autres pays où la revalorisation de ces matériaux se met en place, notre hypothèse articule patrimoine archéologique et habitat contemporain. En effet, dans l'Arménie d'aujourd'hui, l'intérêt accordé aux chantiers archéologiques monumentaux, à leur conservation devrait rejaillir sur le regard accordé à l'architecture de terre contemporaine et le revaloriser.

En effet, nous supposons que la sensibilisation au patrimoine archéologique (architectures savantes) et à sa conservation/valorisation est de nature à renouveler le regard et les pratiques vis-à-vis d'un héritage vernaculaire et de réactiver des savoir-faire en ouvrant des possibilités originales pour les constructions contemporaines.